

ՏԻՐԱՄՈՐ ԿԵՐՊԱՐԸ ՀԱՅ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ՀՈԳԵՎՈՐ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ժ. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հայ ժողովուրդը աշխարհում առաջինը, 301 թ. ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն: Լուսավորիչն ու Տրդատ արքան սրով ու մահվան սպառնալիքով ժողովրդին պարտադրեցին քրիստոնեությունը: Ավերվեցին մեհյանները, սպանվեցին քրմերը, այրվեցին արքունական ու մեհենական մատյանները: «Կործանիչ բազմեաց, քակտիչ մեհենաց զօրութեամբ խաչի»¹: Դարեր հետո այսպես է փառաբանվում Գրիգոր Լուսավորիչը: Ավերվեց ու ոչնչացավ հազարամյա մի պատմություն, կործանվեց հազարամյա մի մշակույթ: Քրիստոնեությունն իր հետ ամայություն բերեց: Ծակատագրով դատապարտված հայ ժողովուրդը պետք է ամեն ինչ նորից սկսեր: 405 թ. ստեղծվեց հայոց գիրը, որը վերածնության մի թափ հաղորդեց իր թագավորությունը, պետականությունը կորցրած ժողովրդին: Հայոց գիրը ժամանակին հասած աստվածային փրկություն էր: «Հայոց երկրի թռչնամիները չզոգացին էլ, թե ինչպես անարյուն, հոգեկան մեծ լարումով հայ ուժերը ստեղծում են գոյության ամենագորեղ խարիսխներից մեկը՝ գիրն ու գրականությունը»²: Գրի առնվեց այն, ինչ պահպանվել էր քրիստոնեական ոչնչացումից, իսկ պահպանվել էին միայն մի շքեղ քերթողական արվեստի չնչին քնկորներ, որ Խորենացին փշուր-փշուր հավաքեց ու հանձնեց պատմությանը: Քրիստոնեության ընդունումից անցել էր մեկ ու կես դար, և տեղ-տեղ, ինչպես և Գողթն գավառում, ժողովուրդը պահպանել էր հեթանոսական ժամանակների շունչն ու սովորությունները:

Պայքարելով քրիստոնեական եկեղեցու անհանդուրժողականության դեմ, ժողովուրդը չէր մոռանում անցյալի փառահեղ ժամանակների պատմությունը, երգում էր աստվածներին, արքաների սխրագործությունները, բնությունն ու կյանքի սերը: Հեթանոս երգերում անպայման եղել է կնոջ ու սիրո փառաբանություն: Չէ որ կար սիրո հովանավոր աստվածուհին՝ Աստղիկը՝ Վահագնի սիրուհին, և Տարոնի Աշտիշատ ավանում Վահագնի ու Աստղիկի համար մի առանձին տեղ էր հատկացված, որ կոչվում էր «սենյակ Վահագնի»: Հնարավոր չէ, որ Վահագնին ձոնված բանաստեղծության կողքին չլինեն և Աստղիկի ծնունդը կամ գեղեցկությունը պատկերող մի երգ, մի նոն, մի բանաստեղծություն:

Հեթանոս Հայաստանում բոլոր աստվածներից ամենից բարձրն ու ամենից պաշտվողը Անահիտ դիցուհին էր, արգասավորության, պտղաբերության, Լուսնի աստվածուհին, Արտաշատի և ամբողջ Հայոց աշխարհի հովանավորը: Ժողովուրդը նրան մեծարում էր Ոսկեմայր, Ոսկեհատ, Ոսկեծին, Մեծն Անահիտ տիկին անուններով, նա էր «Փառք ազգիս մերոյ և կեցուցիչ... մայր ամենայն զգաստութեանց, բարերար ամենայն մարդկան բնութեան»³: Անկարելի է, որ Ոսկեմայր Անահիտը նույնպես չունենար իր գովերգությունը: Գողթն երգերի պատարիկները հնարավորություն են տալիս գաղափար կազմելու հեթանոս Հայաստանի քերթողական արվեստի մասին, ինչպես նաև՝ թե ինչ վերաբերմունք ունեն հայ ժողովուրդը կնոջ ու սիրո հանդեպ:

Հայ գրականության մեջ առաջին կնոջ կերպարը Սաթենիկինն է՝ ալանաց արքայադստեր: Հայոց արքա Արտաշեսին խոհեմության կոչող ալանաց արքայադուստրը հպարտ է, գեղեցիկ ու վեհաշուք: Նա չի խնդրում, չի աղաչում, այլ պահանջում է ազատել իր գերված եղբորը: Սաթենիկ տիկնոջ կերպարը քավականին պերճախոս է: Ընդամենը մի քանի տող, մի քանի հրաշալի պատկեր, որ Խորենացին մեջ է բերում իր պատմության մեջ, ամբողջացնում են նրա կանացի կերպարը՝ կանացիություն ու խելամտություն, արժանապատվություն ու կանացի թուլություն: Սաթենիկի մասին մի քանի տողով սկսվում և վերջանում է նախաքրիստոնեական հայկական բանաստեղծությունը կնոջ մասին: Հավա-

¹ «Ծարական հոգևր երգոց» Երուսաղեմ, 1936, շար. 272—278:

² Հ. Քամրոջյան, «Հայ քննադատություն», հ. Ա, Եր., 1983, էջ 87:

³ Ազարանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տիֆլիս, 1909, էջ 53:

նական է, որ Գողթան երգերի շարքում Արզազանի «կարի չքնաղ» հարձ Մանդրուհին, որի սեփականացում է Արտաշեսը գուցե ի հեռուկա Սաթենիկի, գուցե իսկապես սիրահար վեղով նրա գեղեցկությանը, նվիրված երգեր լինեին: Բայց այդ մասին միայն ենթադրի կարող ենք:

Նախաքրիստոնեական Հայաստանի քերթողական արվեստի պահպանված պատարիկները սպասուցում են, որ քանաստեղծական արվեստը բարձր է եղել հին հայոց մեջ, իսկ Սաթենիկի մասին քանաստեղծություններից, ինչպես նաև հայ ժողովրդական էպոսի կուսանց կերպարների նկարագրությունից հասկանալի է, որ հեթանոս Հայաստանում կինը արհամարհված չէր, և կնոջ թեման քերթողական արվեստում արգելված չէր:

Քրիստոնեությունը բերեց կյանքի նոր ըմբռնում, և քրիստոնեական գաղափարախոսությունը արտահայտվեց գրականության մեջ: Այս գրականությունը, որի հիմքը կանոնական չորս ավետարաններն են, հիմնականում ծառայում էր քրիստոնեական վարդապետության տարածմանն ու ամրապնդմանը: Պետականությունը կորցրած հայ ժողովրդի փրկությունը հավատը անխաթար պահելու մեջ էր: Նա այլևս ամուր կաշած էր իր հավատից, որ ազգային ինքնությունությունը, ազգային մշակույթը պահելու միակ զենքն էր և՛ քրիստոնյա Բյուզանդիայի, և՛ գրադաշտական Պարսկաստանի դեմ:

Հինգերորդ դարում, հայոց գրերի ստեղծումից անմիջապես հետո ստեղծվեց և հայագիր գրականությունը: Պատմագրության կողքին առաջացավ հոգևոր քնարերգությունը: Ը՛ր տարբերություն հին և միջնադարյան այլ գրականությունների, որոնց առաջացումը տեղի է ունեցել թարգմանությունների հիմքի վրա, հայոց հին մատենագրությունը սկզբնավորվեց թարգմանություններին զուգընթաց, ընդամենը մի տասնհամյակի տարբերությամբ, միանգամից հրապարակ հանելով ինքնուրույն գրականության նշանավոր հուշարձանները, մասնավորապես պատմագրության դասական ստեղծագործությունները և հայ հոգևոր քնարերգությունը, որոնցով ազդարարվեց ազգային մեծ գրականության ծնունդը⁴: Եթե հայ պատմիչներն ունեին իրենց ներշնչանքի աղբյուրը, ապա հոգևոր քնարերգության հիմնական աղբյուրը Սուրբ Գիրքն էր՝ Հին ու Նոր կտակարաններ: «Այս նոր երգերն իրենց նյութն առնում են Աստվածաշնչից և սաղմոսների ու մարգարեական օրհնությունների քնարական տարրը որոշում է նրանց ոգին»⁵: Եկեղեցական քանաստեղծ իրեն մեկընդմիջտ եկիրեղ էր Աստծուն, Քրիստոսի հավատի տարածմանն ու ամրապնդմանը, նրա համար այլևս չկար անձնական կյանք, ուրեմն չէր էլ կարող լինել անձնական քնարերգություն: Եվ ստեղծվում է հոգևոր երգը՝ երգ առ Աստված, առ Աստվածածին, առ տիեզերք, առ լույս, որ էր Քրիստոս:

Մեարոպ Մաշտոցը հայ գրերի հետ միասին հայ ժողովրդին տվեց հայերենով գրված առաջին քանաստեղծությունները և Սահակ Պարթևի հետ սկզբնավորեց հայ հոգևոր քնարերգությունը: «Արարին նրա շարականաց եւ գեղեցիկ եղանակաւ եւ մեծ խորհրդով ծնունդ Քրիստոսի, քառասօրեաց գալստեանն ի տանարըն, մկրտութեանն եւ եկաորութեան ի հեթանիա եւ Մեծի յերուսաղեմ, Մեծի Ծարաթու չարշարանաց, Յարութեան, Համբարձման եւ Հոգւոյ Գալստեան, Խաչի Եկեղեցւոյ եւ այլ տօնից տերունականաց եւ ամենայն սրբոց, Ապաշխարութեան և Ննջեցելոց, պէս, պէս զանազան եւ անթիւս, գոր մինչև ցայսօր պաշտի եկեղեցին Հայաստանեաց»⁶:

Հոգևոր երգը, չնայած իր դավանաբանական բնույթին, նաև ազգային էր, չէր կորցրել իր հեթանոսական հիմքը, որ արտացոլվում է լույսի, հրի ու արևի տեսքով: «Հեթանոսական երգերից, մանավանդ դրանց եղանակներից, անկասկած, անկաստելի շատ քան է անցել քրիստոնեական եկեղեցուն: Այդ երգերը, ինչպես և ինքը՝ հայ հեթանոսական կրոնը եղել են ազգային, գունագեղ և արևելյան: Հավանորեն այդ հին երգերից են անցել մեր շարականներին հիացական, փառաբանական և լուսերգության մոտիվները, որտեղ տիրապետող են լուսաբաշտությունն ու լույսից կերտված կերպարները»⁷:

Լույս ի լուսոյ ծագեալ ի հօրէ,
Եւ լուսատրեաց ըզտիեզերս,
Ծնունդ անապական, յանըստուեր լուսոյն,
Ջոր միշտ փառատրեմ դասք անմարմնաց՞:

⁴ Հայ միջնադարյան գրականություն, Եր., 1986, էջ 18:
⁵ Մ. Արեղյան, Երկեր, հ. Գ, Եր., 1968, էջ 527:
⁶ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Եր., 1964, էջ 111:
⁷ Գ. Հակոբյան, Ծարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (5—15 դդ.), Եր., 1980, էջ 822:
⁸ Ծարական հոգևոր երգոց, Կոստանդնուպոլիս, 1853, էջ 81: Այտուհետև շարականներից բոլոր մեջբերումները այսպես՝ Ծար. (և էջը):

Հոգևոր երգը ժամանակի ծնունդ էր, դարի հրամայականը: Հինգերորդ դարում եկեղեցին էր իշխանության ու պետության տերը, և քնարերգությունը պետք է զարգանար հենց այդ՝ հոգևոր երգի ձևով: Թեպետ «միանգամայն բնական պետք է լիներ աշխարհիկ պատմագրության հետ միասին և աշխարհիկ պոեզիայի գոյությունը, իհարկե պատմական անցյալի և ժողովրդական հազարամյա բանահյուսության նյութի վրա: Սակայն աշխարհիկ պոեզիան անհետացել է ընդհանուր անտարբերության կամ քաղաքական աղետների պատճառով»⁹:

Աշխարհիկ պոեզիայի ինքնատիպ ու կատարյալ նմուշ է Մովսես Խորենացու Հայոց պատմությունում վերաշարադրված «Չորս հազներգություն» պոեմը, որը Անանուն քերականը կոչում է «Դասթեան քերթութիւն յաղագս Տիգրանայ»: «Դասթեան քերթությունը» «Մեսրոպյան այբուբենի ստեղծման տարիներին հայ իրականության մեջ երկնված գրական խոշորագույն երևույթներից մեկն է եղել, որը չի գերազանցված ողջ միջնադարում»¹⁰: Այս պոեմից ընդամենը մի չնչին բեկոր է հասել մեզ.

**Եւ արդ՝ Անրգործող ի միտս երևիր առ խորհուրդս փողարին՝
Մեծուղայ Տիգրանայ գեղանին Տիգրանուհի,
Իր Անրածեալ կողաբաղ, Ասև ողջամիտ աշխարհածուի:**

Այսպիսով, հինգերորդ դարից սկսած հայ քնարերգությունը եկեղեցական է՝ հոգևոր: Այն և՛ արտացոլված նյութով, և՛ մտահղացմամբ կրոնական է, կրոնավորի երգ: Աշխարհիկ մարդու, առավել ևս կնոջ թեման դատապարտված էր մեկընդմիջտ: Կինը այստեղ երևում է միայն սրբուհու տեսքով: Դա Տիրամայրն է, միջնադարյան քնարերգության լուսապսակ հերոսուհին, և սրբուհի վկայուհիները, որոնք նահատակվել են ի սեր Քրիստոսի:

Մեր հոգևոր երգերը ամփոփված են Ծարակնոցում, որտեղ քազմաթիվ շարականներ նվիրված են Աստվածամորը և կոչվում են Մեծացուցե՝ փառաբանություն առ Աստվածածին: Այստեղ իշխողը լույսի տարրն է, լուսերգությունը, ոճը հանդիսավոր է.

**Խորանայարկ, կամարանման
Յօրինեցար սուրբ կոյս Աստուածածին... (Ծար. էջ 528):
Աստուածածին, խորան լուսոյ
Անվայրափակ արփոյն կենաց,
Որ եղեր արեւելք
Արեգական արդարութեան: (Ծար. էջ 19)**

Մովսես Խորենացու՝ Աստվածանին նվիրված Մեծացուցեներից մեկն է սա, որտեղ փառաբանվում է Սուրբ կույսը, որը մեզ տվեց կենաց պտուղը, որը մեր բոլոր մեղքերի քափիչն է ու անեծքների լուծիչը: Նա արդարության արեգակ է, լույսի խորան: Աստվածածինն նվիրված շարականները անպայման տարբերվում են մնացած շարականներից. այստեղ քնարականությունն ավելի ակնհայտ է, ավելի արտահայտված.

**Ո՛վ գերահրաշ ծաղիկ բուրեալ եղեմաջ,
Հոտ անմահութեան ծննդոցս Եւայի,
Յարժե սփռեցաւ մահ ընդ տիեզերս,
Օրհնութեամբ գըբզ մեծացուցանեմք: (Ծար. էջ 67):**

Նա է կանանցից ամենաօրհնյալը և մայրերից երանելին, նրան շնորհվեց աստվածակին պարզևը՝ ծնել Փրկչին՝ Աստծո որդուն, որի համար

**Զքեզ, ամենաօրհնեալ Աստուածածին,
Մայրդ լուսոյ և առագաստ Աստծոյ բանին,
Մեծացուցանեմք:
Զքեզ, պայծառ երկինք և ամայ լուսեղէն,
Մնող արարչին և մորենի անկիզկի,
Մեծացուցանեմք: (Ծար. էջ 69):**

«Մայրդ լուսոյ», մորենի անկիզկի, ամայ լուսեղէն...» այլաբանական համեմատություններ են, որ վերցված են Հին ու Նոր կտակարաններից: «Եւ երեւցաւ Ամա հրեշտակ Տեառն բոցով հրոյ ի միջոյ մորենույ. եւ տեսանէր զի մորենին վառեալ էր հրով, եւ ոչ այրէր մորենին» (Աստուածաշունչ, գիրք Ելք, գլ. Գ):

⁹ Հ. Քամրազյան, Հայ քննադատություն, հ. Ա, էջ 348:

¹⁰ Ա. Մնացականյան, «Դասթեան քերթութիւն որ յաղագս Տիգրանայ և Տիգրան Երվանդյան» վեպը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, № 1, էջ 64:

Լույսի, երկնքի, հրի, անկեզ մորենու հետ համեմատելով, շարականագիրները շեշտում են Տիրամոր գերբնական, աստվածային էությունը, էությունը, որ պետք է հղիանար Սուրբ հոգուց և աշխարհին պարզներ Աստծու որդուն: Այդ կապակցությամբ ահա նրան ավետիս է տալիս Գաբրիել հրեշտակապետը (Ծար., էջ 21):

Տիրամորը երկրպագում է ողջ մարդկությունը. նա «ամհարսնացեալ մայր» է, հրեշտակների ուրախությունը, «պարծաճք կուսութեան մարդկան»: Ծարականներում նա համեմատվում է բնության ու տիեզերքի հրաշալիքների հետ՝ «աստուածատունկ խնկաքեր ծառ, գերահրաշ ծաղիկ, առագաստ հրափայլ ծագմամբ, անպ թեթե ու լուսաւոր...»: Ամենուր Տիրամայրը անպայման երկնային է, լուսեղեն, ու երբեմն համեմատությունները լույսի հետ այնքան են խորանում ու խտանում, որ Տիրամայրը երևում է իբրև լույսի աստվածուհի.

**Որ ի բարձրութիւնս երկնից
Բարձր բանիւք բարեբանիս, սրբուհի,
Ի Լիբանանէ դիմեալ հարսն զգեցեալ այսօր
Զարեգակն արկեալ զքև
Եւ ընդ ոտիւք զլուսինն ըստուերատեսակ: (Ծար. էջ 18):**

Արև հագած ու լուսինը ոտքերի տակ իջնում է Տիրամայրը Լիբանանի լեռներից, ինչպես «Երգ երգոցի» հերոսուհին՝ Սուլամիթը.

**Եկ ի Լիբանանէ, հարսն,
Եկ այսր ի Լիբանանէ... (Երգ երգոց, գլ. Գ, 8):**

**Ո՛վ է սա,
Որ երեւալս է իբրև զառաւօտ,
Գեղեցիկ իբրև զլուսին,
Ընտիր իբրև զարեգակն,
Զարմանալի յօրինեալ: (Երգ երգոց, գլ. Զ, 9):**

Սուլամիթը կին է, սիրող կին, Սուլամիթը շոշափելի է, մարդկային գեղեցկություն ունի, նա Աստծո ընտրյալն է, որովհետև նրան է սիրահարվում իմաստուններից իմաստուն Սողոմոն թագավորը: Նա ճաշակում է սերը, սիրո վայելքը ավելի է գեղեցկացնում նրան, նա իր մեջ է կրում թագավորի սերը: Հրեական ժողովրդական բանահյուսության այս կերպարը և ընդհանրապես Հին կտակարանի կանանց կերպարները վառ են, գունագեղ, ամբողջական, ինքնատիպ: Բրիստոնեական գրականության մեջ արդեն կինը որպես սուկ կին անտեսված է, նա կարող է երևալ միայն սրբուհու քողի տակ, սրբուհու տեսքով, կամ Բրիստոնի ջջախմբում: Արեգակով փայտաթված Մարիամի նկարագրությունը վերցված է Նոր կտակարանի Հովհաննու Հայտնությունից (Յայտ. Յովհ., գլ. ԺԲ, 1): Ոչ լույսը, ոչ արեգակը Մարիամի կերպարը չեն դարձնում իրական, շոշափելի: Նա կին չէ այլևս, նա մի կույս է, որ սրբորեն է ծնվել ու սրբորեն էլ ծնել Փրկչին: Նա աստծո ընտրյալն է, որովհետև աստծո լույսը, աստծո սերն է կրում իր մեջ:

Ծարականներում չկա երկրային, իրական պատկեր: Հերոսուհին անմարմին, աննյութեղեն կին է, որ ծնվելով հողածին Աննայից ու Հովակիմից, սակայն տաճար է դարձել, դարձել է երկնային դուռ:

Ծառ շարականներ նվիրված են Աննային՝ Մարիամի մորը: Աստծո շնորհիվ անպտուղ Աննան բեղմնավորվում է և ծնում Մարիամին: Մարիամի ծնունդով ու Աննայի փառաբանությամբ էլ բացվում է Ծարակնոցը: Այն կանոնական շարականների ժողովածու է: Հակոբ Կլայեցու (13-րդ դ.) «Երգեցեք որդիք Սիոնի» շարականը մարդկությանը ազդարարում է Մարիամի ծնունդը և պահանջում.

Տուր օրհնութիւն տուողին մեզ զմայրն լուսոյ: (Ծար. էջ 1):

«Երգեցեք որդիք Սիոնի» շարականը առաջին անգամ երգվել է 1287 թ.: Մինչև այս տասնյակ և հարյուրավոր շարականներ, Մեծացուցե՞ներ էին նվիրվել Աստվածամորը, համարյա բոլոր շարականագիրները փառաբանել են նրան, և հայոց եկեղեցում շաբաթվա երրորդ օրը նվիրված էր Աստվածամորը: Սակայն մինչև 7-րդ դարը Աստվածածնի ծննդյան օրվան նվիրված տոնակատարություն չէր սահմանված: Եվ միայն յոթերորդ դարի վերջերին այն միօրյա տոնակատարությամբ ընդունվեց սկզբում Հռոմում, ապա մյուս քրիստոնյա երկրներում: Տասներեքերորդ դարում արդեն քրիստոնեական եկեղեցին որոշում է Տիրամոր ծննդյան տոնակատարությունը դարձնել ութօրյա: Բանն այն է, որ հեթանոսական կրոնի անհետացումից հետո, երբ ժողովուրդը անկաշկանդ պաշտում էր մայր աստվածուհիներին, նրանց վստահում իր ցավերն ու հոգսերը, սերն ու հուսալքությունը, գրնա-

կանորեմ անհրաժեշտություն է զգացվում որևէ կնոջ, աստվածուհու, կին-տարրի ստեղծումը քրիստոնեական կրոնի մեջ, ինչ-որ մայրական միջնորդություն ժողովրդի և աստծո միջև, նուրբ և ներողամիտ մեկի անհրաժեշտություն, ում կարող էին դիմել իրենց մարդկային գործերով, դժբախտություններով ու անհաջողություններով, ում մոտ կարող էին փնտրել սփոփանք և օգնություն»¹¹: Իսկ այդպիսին կարող էր լինել միայն Հիսուսի մայրը՝ Մարիամը: Եվ այսպես, կատարվեց աստվածային խորհուրդը, ծնվեց Մարիամը.

**Ճճծացեք որդիք մարդկան աշօր
Ծննդեամբ արբուհվոյ կուսիւն,
Քանզի որ տարաւ զանտանելին յարգանդի,
Անսերմնապես այսօր բղխեաց յարմատոյն յեսսեայ: (Օար. էջ 1):**

«Ըստ շարականի՝ Տիրամայրը առանց մեղաց ու մարդկային մերձավորության առաջին ծնունդն է: Հետագայում այդպես պետք է ծնվեն Հովհաննես Մկրտիչն ու Քրիստոսը: Եվ անհնակարևորն է, այս նոր ծնունդն է ծնելու Փրկչին, որը որակվում է որպես լուսոյ մայր»¹²:

**Առաւօտ խաղաղութեան և արուեսակ զուարթարար
Այսօր Մարիամ արբուհին ի փառս քո, Քրիստոս,
Մագեաց մեզ լոյս յորդոցն օրինաց,
Անդադար երգով սքօք զքեզ միշտ մեծացուցանեմք: (Օար. էջ 10):**

Աստվածային խորհրդով ծնվում է Մարիամը: Ամուլ Աճնան համեմատվում է ամուլ երկրի հետ, իսկ այդ ամուլ երկրից ծնվում է բարեբեր բույսը: (Օար. էջ 10):

Նա՛ Ռովիտների շուշանը, հավերժ գեղեցիկ, հավերժ երիտասարդ Մարիամը սովորական մի կույս չէ: Ծննդյան օրից նա մի արբուհի է այլևս, որն իր որովայնում աստվածային լույս է կրում.

**Զանճառելի լոյս աստուածութեան
ՏՅօրհնաբար կրեցեր ի քում յորովայնի... (Օար. էջ 508):**

Այլ շարականներում աստվածային լույսի փոխարեն Տիրամայրն իր որովայնում հուր է կրում, բայց չի բոցավառվում.

**Անապական տաճար և մորեմի անկիզելի,
Որ զանշէջ հուրն աստուածութեան
Ի քեզ տարեալ կրեցեր,
Որով բնութեանս կիզեալ շիջալ կրից բոց: (Օար. էջ 18):**

Հուր, բոց, լույս, արեգակ... հեթանոս պաշտամունքի բոլոր խորհրդանշանները Մարիամը եղեգան փողի նման կրում է իր որովայնում, և Մարիամից, ինչպես եղեգան փողից, ծնվում է բոցը, ծնվում է լույսը, ծնվում է հուրը, ծնվում է Աստված:

Մարիամին փառաբանում է ողջ տիեզերքը: Նրա ծնունդով Սինա լեռը լցվում է լույսով: Նա երկնի Արուսյակն է, որ ծագում է արևից առաջ՝ մարդկությանը ավետելով «մոտակա լուսաբացը, որին հետևելու է իսկական, անպարփակ լույսը՝ Փրկիչը»¹³: Նա իր անարատ հղիությանը «վայելչապես» ծնում է Հիսուսին.

**Դու լուծիչ երկանց, բարձող առիծից,
Մագումն արևու լուսոյն ճշմարտի,
Որով հերքեաւ խաւարն առաջին: (Օար. էջ 47):**

Ահա թե որն է Տիրամոր խորհուրդը. նա իր երկունքով ու ծնունդով լուծում է նախա-մոր մեղքը՝ բանալով երկնքի արդարության դռները:

Երջանիկ մի կույս է Մարիամը, բոլոր կանանցից ամենաօրհնյալը, նրա որդին է, որ պետք է փրկի մարդկությանը.

**Ուրախ լեր, մայր անճառ լուսոյ, սուրբ աստուածածին,
Քանզի առ ի քէն ծագեաց մեզ լոյս ի լուսոյ,
Եւ զխաւարն անգիտութեան փարառեաց
Անտաւեր լուսում ի իրով: (Օար. էջ 540):**

¹¹ З. Косидовский. Сказания евангелистов, 1987, М., с. 165.

¹² Ք. Հակոբյան, Օարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ, Երևան, 1980 թ., էջ 270:

¹³ Անդ, էջ 27:

Սակայն Մարիամի ուրախությունը փոխվում է լացի: Խաչում են նրա միածին որդուն, խաչում են մարդկանց բազում մեղքերի համար, մարդկանց ու աշխարհի փրկության համար: Նրա կենարար արյունը լվանում ու մաքրում է մեղավոր տիեզերքը: Անսահման է մայրական վիշտը: Մարիամը սգում է որդու մահը, «յոթնախոցված» արտով տանում է իր Միածնի խաչելության բոլոր տառապանքները: Համայն տիեզերքը ողբում ու վշտակցում է Տիրամորը.

**Արարածոցս բնութիւնք ողբակցելով Տիրամարմ,
Արջնազգեցեալ խաւարաւ և դողազով գաշէին,
Աղաչանաւք սրբութիւնք խնայեա
Ի մեզ Քրիստոս-անճառն թագաւոր¹⁴:**

Ծով վիշտը շուտով փոխվում է ծով ուրախության, հարություն է առնում որդին:

**Աստուածածին Մարիամ, տիեզերաց ցնծութիւն,
Աղբեր քո սուրբ արտասուաց
Սրբեցե կանճինս մեր ի մեղաց,
Եւ ուրախալից բերկրանաւք տեսցես դու
Ջորդին քո աստուածապետ յարուցեալ¹⁵:**

Խորին երկյուղածությամբ ու պատկառանքով են դիմում շարականագիրները հողածին Մարիամին: Նա կին է, մայր, նա բարի է, գթասիրտ, և փառաբանելով ու մեծարելով դիմում են նրա կանացի գթասրտությանը: Նա պետք է որդու առաջ բարեխոս լինի մարդկանց բազում մեղքերի համար:

Եվ ահա, կանանցից լավագույնը, համապայծառ ծաղիկը, միամայր սրբուհին բնական, երջանիկ մահով կնքում է իր մահկանացուն.

**Այսօր տիրամայր սրբութի կոյսմ
Ավանդեալ գորքամեալ հոգին
Ի ձեռն հրեշտակական դասուց,
Որպես գերարփի փառեալ ահեղիցն
Նմանեալ հրեղինաց դասուցն: (Ծար. էջ 526):**

Հավաքվում են բոլոր երկնաբնակները Հիսուսի հետ միասին, ամփոփում են Մարիամի մարմինը, փառաբանում նրան, ապա բոլորով միասին ամպերեն կառքով համբառնում երկինք.

**Ուրախ լեր, հարսն երկնային, կոյս անապական,
Քանգի երկայնոցն զքեզ այսօր
Ընկալեալ սոճէին ուրախութեամբ: (Ծար. էջ 540)**

Տիրամոր մահվան նվիրված շարականները դրված են վերափոխման կանոնում, սակայն վերափոխման ամենագեղեցիկ, ամենաքնարական ու ծավալուն Կիրակոս Երզրնկացու «Արևելք գերարփին» շարականը չի դրված այս կանոնում, այլ «ի վերջ ամենայն շարականաց, ցուցանել, թե ի վերջին ժամանակս եղև ընկալեալ ի սովորութիւն»¹⁶: Իսա Տիրամորը նվիրված բոլոր Մեծացուցէների ու շարականների խոսացված ամփոփումն է, գրված է այբուբենի կարգով: Այստեղ էլ Աստվածամայրը փառաբանվում է որպես մայր բանին, ամպ թեթև, լուսածին, լոյս ի լուսոյ, խորին խորհուրդ անքնին, մարգարիտ լուսափայլ և այլն: Համեմատությունների այս ամբողջության մեջ Աստվածածնի կերպարը դառնում է ավելի վերացական, նա մի լուսեղեն պատկեր է, հավերժ գեղեցիկ, հավերժ նրիտասարդ.

**Դու ծաղիկ անթառամ,
Տոհմի սեռիս մարդկութեամբ
Եւ շառաիղ օրհնութեան: (Ծար. էջ 844)**

Մարիամը շոշափելի, իրական՝ այստեղ ևս չի երևում: Ինչպիսի՞ն է ճա լույս և հուր, անթառամ ծաղիկ և Արուսյակ լինելուց թացի, հայտնի չէ: Նա սուկ Աստվածամայր է:

¹⁴ Ս. Վարդապետ Ամասունի, Հին եւ Նոր պարականոն կամ անվաներ շարականներ, Վաղարշապատ, 1911, էջ 95:

¹⁵ Աճ, էջ 96:

¹⁶ Գ. Ավետիսյան, Բացատրություն շարականաց, Վենետիկ, 1814 թ., էջ 708:

Այդպես էլ պետք է լիներ, քանի որ Մարիամի կերպարը կերտելիս, շարականագիրները որպես բնորդ չեն վերցրել իրական, կենդանի, աշխարհիկ կնոջը, նա փառաբանվում է միայն ու միայն իր աստվածային շնորհի համար:

Եվ այսպես, Մարիամը մահանում է որդու ձեռքերի վրա.

Ավանդեցեր զքո սուրբ զհոգի:

Ի ձեռն որդույ քոյ միածնի: (Ծար. էջ 847)

Բոլորը՝ սրբերը, առաքյալները, «գունդք հրեղէն զուարթոնց» որդու հետ միասին մասնակից են Մարիամի մահվան ու վերափոխման սրբազան արարողությանը: Հորդ արտասուք է հոսում նրա մահվան համար, բայց և միևնույն ժամանակ ցնծայից քերկրությամբ քաղցր երգեր են երգում նրա վերափոխման առթիվ: Տիրամոր սրբազան աճյունը տեղափոխվում է «յաշխարհ վերնոց»:

«Արևելք գերարփին» ինքնատիպ շարականով փակվում է հայոց հոգևոր գանձերի ժողովածուն, որտեղ հայ հանճարների «մրցությունը կերևա»:

Բացի մեր քսանչորս շարականագիրներից, 8-րդ դարում ապրել ու ստեղծագործել է Ստեփանոս Սյունեցու քույր Սահակոյիստ Սյունեցին, որը հոգևոր երգերի հետ միասին հորինել է նաև երաժշտություն, ուսուցանել հայ մանուկներին: Սահակոյիստը ապրել է միայնակ, աշխարհից ու մարդկանցից հեռու՝ Գառնիի ձորում: Սահակոյիստի շարականները տեղ չեն գտել Ծարակնոցում, այստեղ նույնիսկ հիշատակություն չկա նրա մասին: Եվ քնական է, եկեղեցու հայրերը չպետք է ընդունեին կին շարականագրին, ինչպես որ չէին ընդունում կնոջն ընդհանրապես:

Բոլոր Մեծացուցեների մեծն Սահակոյիստի շարականը նույնպես Աստվածամոր գովերգումն ու փառաբանությունն է որպես անապական տաճար, հոգևոր անդաստան.

Անդաստան հոգևոր և համապայծառ ծաղիկ,

Ծառ կենաց անկեալ յԱդիւն, սուրբ կոյս...

Օրհնեալ ես դու ի կանայս,

Բերկրեալ Տիրամայր և կոյս¹⁷:

Ինչպես տեսանք, վաղ միջնադարյան հայ քնարերգության հերոսուհին հայուհին չէ: Անկասկած մեր հոգևոր բանաստեղծները ծանոթ էին Գողթան երգերին, գուսանական արվեստին ու ժողովրդական բանահյուսությանը: Սակայն աշխարհուրաց կրոնավորի համար կի՛նը և աշխարհը, անձնական կյանքն ու հույզերը մեկընդմիջտ մոռացված էին ու արգելված: Քրիստոնյա բանաստեղծը իր անձնական, քաղաքական ու հայրենասիրական քնարը անփոփում էր հոգևոր երգի մեջ: Եվ չնայած որոշ միակերպությանը, մի աստվածային վեհություն կա շարականներում, մաքրություն ու անապական լույս:

Ж. А. МХИТАРЯН.—Образ святой богоматери в армянской лирике раннего средневековья.—Главным источником вдохновения в раннем средневековье была Библия—Ветхий и Новый Заветы. Мирской человек, и особенно женщина, не могли быть героями литературы тех времен. Женщина средневековья являлась поэтам только в непорочном, святом облике. Это была непременно Богоматерь и окружающие ее святые девы—мученицы за веру.

В статье исследуются армянские духовные песни — шараканы, где восславляется Божья Матерь.

¹⁷ «Հասկ» ամսագիր, 1951 թ., № 12: